ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հուլիս 2026թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հուլիսին գումարվել է Պալատի խորհրդի **2 նիստ՝ 10.07.2026թ. ին և 28.07.2026թ.-ին:**

10.07.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի 2026–2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունները և 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագիրը, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու մասին որոշումները: Նիստի ընթացքում քննարկվեցին նաև աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերի բարելավման հարցեր:
28.07.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 8 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի փորձագետ հաշվապահի անդամակցությունը դադարեցնելու և որպես աուդիտոր անդամ անդամակցելու, Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները: Նիստի ընթացքում ներկայացվեցին և քննարկվեցին Հաշվապահների միջազգային դաշնության անդամակցության պարտավորությունների թարմացումները, ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության իրագործման գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 09.07.2026թ.-ին և 24.07.2026թ.-ին, որոնցում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 6 անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ 15.07.2026թ.-ին և 25.07.2026թ.-ին որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 14 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

27.07.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «AI հիմունքներ և պրակտիկ կիրառություններ հաշվապահների և աուդիտորների համար» թեմայով դասընթացը: Այն վարում էին **Արշակ Ուլուբաբյանը և Էլլա Մանուկյանը:**

29.07.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Կրիպտոակտիվների շրջանառությունից բխող ՓԼ/ԱՖ ռիսկեր» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Տիգրան Գաբրիելյանը:**

Պալատի անդամներին է ներկայացվել Պալատի 2026–2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունների փաստաթուղթը

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը Պալատի անդամներին է ներկայացրել Խորհրդի կողմից հաստատված «Պալատի 2026–2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունները եվ 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագիրը» փաստաթուղթը:
Փաստաթուղթը սահմանում է Պալատի միջնաժամկետ զարգացման հիմնական ուղղությունները և 2026 թվականի առաջնահերթ միջոցառումները՝ նպատակ ունենալով ամրապնդել Պալատի ինստիտուցիոնալ կարողությունները, նպաստել մասնագիտության զարգացմանը և բարձրացնել Պալատի գործունեության արդյունավետությունը:
Պալատը կարևորում է անդամների մասնակցային ներգրավվածությունը և վստահ է, որ համատեղ աշխատանքը կնպաստի կազմակերպության հետագա զարգացմանը և հաշվապահական ու աուդիտորական մասնագիտությունների հեղինակության բարձրացմանը Հայաստանում:

2026 թվականի որակավորման քննությունները՝ բարձր մասնակցության ցուցանիշով

Ս.թ. հուլիսի 15-23ը տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի ամառային քննաշրջանի քննությունները:
Մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը շարունակում է մնալ բարձր. եթե **2025 թվականին** Պալատի որակավորման քննությունների մասնակիցների թիվը կազմել էր 1658, ապա **2026 թվականին** այդ թիվն աճել է՝ հասնելով **1808-ի:** Մասնակիցների աճին զուգահեռ Պալատը շարունակում է ապահովել որակավորման քննությունների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը:

Գիտելիքից դեպի մասնագիտություն. Պալատը շնորհավորեց ՀՊՏՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» կրթական ծրագրի շրջանավարտներին

Ս.թ. հուլիսի 6-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատը մասնակցեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Հաշվապահական հաշվառում և հարկում» կրթական ծրագրի բակալավրի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությանը:

Շրջանավարտներին շնորհավորելով՝ Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը նշեց, որ հաշվապահի մասնագիտությունն առանցքային նշանակություն ունի տնտեսության թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վստահության ապահովման գործում: Նա նաև կարևորեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Պալատի միջև ձևավորված արդյունավետ համագործակցությունը՝ ընդգծելով, որ որակյալ կրթությունը, մասնագիտական որակավորումը և գործնական փորձը փոխլրացնող բաղադրիչներ են, որոնք զարգանում են համատեղ:
Իր խոսքում Պալատի նախագահը առանձնացրեց մասնագիտական հաջողության երեք հիմնասյուները՝ շարունակական ուսուցումը, մասնագիտական էթիկան, ինչպես նաև հասարակական պատասխանատվությունը՝ շեշտելով, որ հենց այս արժեքներն են ձևավորում վստահելի և պահանջված մասնագետի կերպարը:
Արարողության ընթացքում Պալատը խրախուսեց նաև կրթական ծրագրի երկու լավագույն ուսանողներին՝ նրանց շնորհելով 2026–2027 թվականների ընթացքում Պալատի որակավորման երկու դասընթացներին անվճար մասնակցության հավաստագրեր:
Ամփոփելով իր ելույթը՝ Թաթուլ Մովսիսյանը շրջանավարտներին մաղթեց մասնագիտական հաջողություններ և վստահություն հայտնեց, որ նրանցից շատերը շուտով կհամալրեն Պալատի մասնագիտական համայնքի շարքերը:
Շրջանավարտներին շնորհավորեցին նաև մասնագիտական համայնքի ներկայացուցիչները՝ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» աուդիտորական կազմակերպության գլխավոր տնօրեն Վահագն Սահակյանը, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» աուդիտորական կազմակերպության մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավար Սոնա Մարտիրոսյանը և «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» աուդիտորական կազմակերպության ավագ մենեջեր, հարկային և հաշվապահական ծրագրերի ղեկավար Ասաներ Ալոյանը, ովքեր նույնպես հանձնեցին խրախուսական նվերներ:

ՀԱԵԽ նիստ

2026թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը:
Օրակարգում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի հանձնաժողովների անհատական կազմերում փոփոխությունների հաստատումն էր, ինչպես նաև ընթացիկ այլ հարցերի քննարկումը:
ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի խորհրդի նախագահ Թաթուլ Մովսիսյանը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:
ՀԱԵԽ-ի անդամ են հանդիսանում ԱՊՀ երկրների 10 մասնագիտացված (պրոֆեսիոնալ) կառույցները:

Պալատի սպորտային խաղերի մեկնարկը

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախաձեռնությամբ ս.թ. հուլիսի 18-ին կայացավ Պալատի անդամների համար կազմակերպված առաջին ընկերական վոլեյբոլի խաղը՝ տալով Պալատի նոր սպորտային նախաձեռնությունների մեկնարկը:
Պալատը նպատակ ունի իր անդամների համար ձևավորել ոչ միայն մասնագիտական համագործակցության, այլև առողջ ապրելակերպի, թիմային աշխատանքի և փոխադարձ շփումների նոր մշակույթ: Այդ գաղափարի շրջանակներում մեկնարկել են սպորտային խմբերի ձևավորման աշխատանքները, որոնց առաջին արդյունքը դարձավ վոլեյբոլի այս հանդիպումը:
Հանդիպումն անցավ ակտիվ, մրցակցային և միաժամանակ ջերմ ու ընկերական մթնոլորտում՝ համախմբելով Պալատի անդամներին: Խաղին մասնակցում էր նաև Պալատի նախագահը, ինչը ևս մեկ անգամ ընդգծեց Պալատի ղեկավարության հանձնառությունը՝ խրախուսելու առողջ ապրելակերպը, անդամների միջև անմիջական շփումները և համայնքային ակտիվ կյանքը:
Մասնակիցները հնարավորություն ունեցան ոչ միայն մարզվելու, այլև ոչ պաշտոնական միջավայրում շփվելու, նոր ծանոթություններ հաստատելու և ամրապնդելու թիմային ոգին: Առաջին հանդիպումը ցույց տվեց, որ նման նախաձեռնությունների նկատմամբ Պալատի անդամների հետաքրքրությունը մեծ է, և դրանք կարող են դառնալ Պալատի համայնքային կյանքի կարևոր բաղադրիչներից մեկը:
Պալատը նախատեսում է շարունակական հիմունքներով կազմակերպել սպորտային հանդիպումներ՝ ընդլայնելով անդամների ներգրավվածությանը: